# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 23

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի16-րդ հոդվածի պահանջով՝

ավագանին որոշում է.

1.Հաստատել Զառիթափի համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի թիվ 3 նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝
2. Շվեյցարայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ կովիդ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու նպատակով կազմակերպված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համաձայնություն տալու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայքնի Բարձրունի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0,025 հա հողատեքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
4.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող սոցիալական ներդրումների եվ տեղական զարգացման ծրագրերին մասնակցելու՝ համաձայնություն տալու մասին;

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Սասուն Վարդանյան

Արգիշտի Բաբայան

Սմբատ Ասլանյան

Վիրաբ Սաղաթելյան

Գևորգ Գևորգյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 24

### ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ՝ ԿՈՎԻԴ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով,օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով.

**Ավագանին որոշում է՝**

1. Համաձայնություն տալ Զառիթափ համայքնին մասնակցելու Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և այդ նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /ԳՄՀԸ/ կողմից համայնքներում տնտեսական զարգացման ուղղված փոքր և միջին ծրագրերը իրականացնելու նպատակով համայնքներին տրամադրվող դրամաշնորհ ստանալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝
Սասուն Վարդանյան
Արգիշտի Բաբայան
Սմբատ Ասլանյան
Վիրաբ Սաղաթելյան
Գևորգ Գևորգյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 25

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,025 ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ.-ի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ.-ի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001թ.-ի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի անդամների 06.05.2021թ. N 99 եզրակացությունը.

***ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի Բարձրունի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում՝ իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 0,025 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-013-0003-0039/ հողատեսքը փոխադրել արդյունաբերության. ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

2. ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջառիթափ համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Սասուն Վարդանյան

Արգիշտի Բաբայան

Սմբատ Ասլանյան

Վիրաբ Սաղաթելյան

Գևորգ Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ՝ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով , 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով.

**Ավագանին որոշում է՝**

1. Համաձայնություն տալ Զառիթափ համայքնին մասնակցելու Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրին: Ծրագրին մասնակցելու համար առաջնային խնդիր համարել Զառիթափ բնակավայրի կիսակառույց մշակույթի տան կառուցումը:

2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 7-12 % ներդրում՝ ՍՆՏԶ ԼՖ ծրագրի պահանջներին համապատասխան:

3.Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:

4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Սասուն Վարդանյան

Արգիշտի Բաբայան

Սմբատ Ասլանյան

Վիրաբ Սաղաթելյան

Գևորգ Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ